

## ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏՈՒՄ

Մխիթարեան միաբանութեան անդամ, ականաւոր գիտնական, բանաստեղծ եւ մանկավարժ Հայր Ղեւոնդ Ալիշանն իր երկարամեայ նուիրեալ գործունէութեամբ, մարդկային որակներով եւ գիտական մակարդակով անուրանալի վաստակ ունեցաւ հայագիտութեան մէջ եւ մնայուն հետք թողեց իր ժամանակակիցների կեանքում: Ակունքում սէրն էր Աստուծոյ, մարդու, հայրենիքի, գիտութեան եւ բնութեան հանդէպ, դրանից բխող ներքին լոյսը, լուսաւոր մտածելակերպը, խոնարհութիւնը, տիտանական աշխատասիրութիւնը եւ աստուածատուր շնորհները: Պատահական չէ, որ հայ եւ օտարազգի արուեստագէտները փորձել են անմահացնել սիրելի կերպարն արուեստում, կիսուել են Ալիշանի հետ հանդիպումներից ստացած վառ տպաւորութիւններով, երջանիկ են եղել հաղորդակից լինել Ալիշանի հայանպատ գործին եւ ամբողջ կեանքում գոհունակութեամբ են կրել նրա հետ հանդիպումից ստացած պայծառ հետքը:

Անուանի բնանկարիչ, գրող եւ հասարակական գործիչ Գէորգ Բաշինջաղեանի 1884 թուականի յուշերում Ալիշանը ներկայանում է որպէս նիհար, կարճահասակ, բարի եւ խոնարհ աչքերով, մանկական անմեղութիւնը դէմքին գրուած լուսաւոր կերպար<sup>1</sup>:

Կ. Պոլսի եւ Հռոմի Գեղարուեստի ակադեմիաների սան, հայ մշակոյթի, արուեստի եւ պատմութեան նուիրեալ, իր նկարչական շնորհների բազմակողմանիութեամբ զարմացնող նկարիչ, հայ եւ համաշխարհային արուեստին նուիրուած ուսումնասիրութիւնների հեղինակ, բանաստեղծ Արշակ Ֆէթվաճեանի եւ Ալիշանի մտերմութիւնն սկսուել էր 1888ին Վենետիկում՝ Սուրբ Ղազար կղզում: Նկարիչը երեք տարի շարունակ՝ 1889-1891 ամառա-

1 Տե՛ս ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ, Գ., Ս. Ղազարի կղզին 1884 թուականին, ի Ալիշանը ժամանակակիցների յուշերում, Երևան 1974, 95:

յին ամիսներին հայ եւ բիւզանդական միջնադարեան ձեռագրերի նկարազարդումների ընդօրինակութիւններ է արել<sup>2</sup>: Ի պատասխան Ալիշանի՝ վարձահատոյց լինելու առաջարկի, Ֆէթվաճեանը խնդրել է, որ նա հանդէս գայ բնորդի դերում, եւ 1891ին «Իւր սեմեակի մէջ նկարել անմոռանալի մեծ մարդու դիմանկարը»<sup>3</sup>: Ֆէթվաճեանի վրձնած Ալիշանը գիտնական-մտաւորականի կերպար է, ում պրպտունն եւ կենտրոնացած հայեացքն ասես մատնում է ներքին կենտրոնացումը, լայն ճակատն ակօսող կնճիռները՝ իր մտաւոր գործունէութիւնը, իսկ պատկերի շարժուն քսուածքները՝ մտքի ու գրչի ժրջանութիւնը: Թէեւ դիմանկարը որոշ ժամանակ կորսուած է համարուել, սակայն ի վերջոյ այն գտել է իր հանգրուանը՝ Մխիթարեան միաբանութեան Ալիշանի աշխատասենեակում<sup>4</sup>:

1895ին Ալիշանին վրձնել է նաեւ Վենետիկի Գեղարուեստի թագաւորական ակադեմիայի սան, կրօնական եւ աշխարհիկ թեմաներով բազմաթիւ որմնանկարների եւ հաստոցային պատկերների հեղինակ, իտալացի նկարիչ Նոյ Բորդիցեօնը<sup>5</sup>: Աշխատասենեակում թղթերի մէջ խորասուզուած աշխատանքի պահին Ալիշանին պատկերող այս կտաւն աչքի է ընկնում մեծ գիտնականի լուսաւորչական եւ մտաւոր ներուժը ներբողոց ուսմանտիկական ոգով:

Այլ երանգ ունի արդէն 1957ին Երեւանի Գեղարուեստաարդիւնաբերական ուսումնարանի սան, շնորհալի պորտրետիստ Եփրեմ Սաւայեանի՝ լուսանկարից վրձնած դիմանկարը: Սաւայեանի Ալիշանը ծանր խոհերի մէջ խորասուզուած, տարիքն առած մտաւորական է: Բաց եւ մուգ երանգների ցայտուն եւ կոնտրաստային հակադրութիւնն ասես ընդգծում է մտքի եւ

2 Տե՛ս ԶՈՒԳԱՍՁԵԱՆ Լ., *Արշակ Ֆէթվաճեան*, Երեւան 2011, 23:

3 ՃԱՆԱՇԵԱՆ Մ., *Արշակ Ֆէթվաճեան եւ Հ. Ալիշան*, ի *Ալիշանը ժամանակակիցների յուշերում*, 209:

4 Անդ., 214-215:

5 Պորտիմենոը հեղինակել է նաեւ Միխարեան միաբանութեան Հայր Իսաակ Երսեմցի, Հայր Զարբհանալեանի, Հայր Դաւիթ Նազարեթեանի դիմանկարները, յարդարել է Միաբանութեան գրադարանի ինտերիերը, Սուրբ Ղազար Մայրավանքի եկեղեցու համար ստեղծել է Սուրբ Գրիգոր Լուսաւորչի խորանապատկերը եւ այլն (Տե՛ս ԲԱԽՁԻՆՅԱՆ Ա., *Վենետիկի Մշակութային կենտրոնը եւ միջազգային գեղարուեստը*, «Բազմավէպ», Վենետիկ 2017, թիւ 3-4, 52, ԶՐԱՓԵԱՆ Հ., *Նոյ Պորտիմենո*, «Բազմավէպ», Վենետիկ 1921, փետրուար, թիւ 2, 64, MONDI M., *Noè Bordignon. Vita e Opere*, DAL BELLO L., *Noè Bordignon. La vita*:

հոգու ազնուականի լուսապայծառութիւնը, մինչդեռ Փօնի մզու-  
թիւնը եւ անշարժացած հայեացքը փոքր-ինչ տազնապեցնող եւ  
մոայլ ազդեցութիւն են թողնում դիտողի վրայ:

1899ին աշխարհահռչակ ծովանկարիչ **Յովհաննէս Այվա-  
զովսկին** վրձնել է «Պայրոնի այցը Սր. Ղազար կղզի» կտաւը, որտեղ  
նկարիչը բանաստեղծին հիւրընկալող Մխիթարեանների կենտրո-  
նում պատկերել է Ալիշանին:

Թիֆլիսում հրատարակուող «Արձագանք» գրական եւ քա-  
ղաքական պատկերազարդ շաբաթաթերթի 1890 թուականի մա-  
յիսի 13ի տասներկուերորդ համարում գետեղուած է եղել Հայր  
Ալիշանի գրաֆիկական դիմապատկերը, որն ուղեկցող ստորագ-  
րութիւնից ենթադրում ենք, որ հեղինակը Սանկտ-Պետերբուրգի  
Գեղարուեստի ակադեմիայի շրջանաւարտ, Թիֆլիսում ծնուած  
եւ ստեղծագործած նկարիչ եւ մանկավարժ **Յարութիւն Շամշի-  
նեանն** է<sup>6</sup>: Յայտնի է, որ նկարիչը ժամանակին աշխատակցել է  
Թիֆլիսում հրատարակուող հայկական «Արձագանք», «Գեղա-  
րուեստ», «Թատրոն» եւ այլն պարբերականներին եւ «գարկ է տուել  
դրանց գրաֆիկական ձեւաւորման արուեստին»<sup>7</sup>:

Իր կատարման արուեստով եւ ընդհանուր բնութագրով  
Շամշինեանի դիմանկարին մօտ է Սանկտ-Պետերբուրգում ստեղ-  
ծագործած, 1890ական սկսած Թիֆլիսեան մի շարք թերթերի ու  
ամսագրերի՝ «Ադրիւր»ի, «Արձագանք»ի եւ «Տարագ»ի, ինչպէս  
նաեւ պետերբուրգեան «Արաբս» հանդէսի էջերում իր գրաֆի-  
կական մանրանկաներով յայտնի Պօղոս Տէր-Ասատուրեանցը (Պոլ  
Ասատուրի)<sup>8</sup>: Ալիշանի գրաֆիկական դիմապատկերը զարդարում  
էր հրապարակախօս, քննադատ, գրական-հասարակական գործիչ  
Գրիգոր Արծրունու «Հայագգի գործիչների գեղարուեստական արտ-  
մը», որ լոյս է տեսել Թիֆլիսում 1891 թուականին: Ալբրտին  
հնարաւոր է ծանօթանալ մասնաւորապէս Երեւանում՝ Եղիշէ Չա-  
րենցի անուան թանգարանում<sup>9</sup>: Նշենք, որ Գրիգոր Արծրունին Ա-  
լիշանի հետ քանիցս հանդիպելու պատիւն ու երջանկութիւնն է

6 Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 13 մայիսի 1890, N 12, 11:

7 Ա.ՂԱՍՅԱՆ Ա., Հայ կերպարուեստի զարգացման ուղիները XIX-XX դար-  
երում, Երեւան 2009, 46, 244:

8 Անդ, 255:

9 Տե՛ս «Գեղարուեստական արժու հայագգի գործիչների», Թիֆլիս 1891, Ե.  
Զարենցի անուան գրականութեան եւ արուեստի քանգարան, Գ. Արծրու-  
նու ֆոնդ, արժում 151:

վայելել, ինչի մասին յետագայում սիրով, ջերմութեամբ եւ երախտիքով գրում է իր յուշերում<sup>10</sup>:

Ականաւոր հայագէտի եւս մէկ դիմապատկեր գտնում ենք նաեւ 1903 թուականին «Գեղունի» հանդէսի էջերում՝ Խաչատուր Աբովեանի, Բաֆֆու, Ռափայէլ Պատկանեանի, Ստեփան Նազարեանցի դիմանկարների կենտրոնում<sup>11</sup>: Ի տարբերութիւն աշխարհիկ զգեստներով, 3/4 դիրքով դիմանկարների՝ Ալիշանը պատկերուած է հոգեւորականի սեւ հագուստով, գրեթէ դիմահայեաց, ինչը սրբազնականութիւն է հաղորդում իր կերպարին: Թէեւ պատկերը ստորագրուած չէ, եւ այն ուղեկցող գրութիւն չկայ, սակայն հաւանաբար հեղինակը Սիմոն Նահապետեանն է: «Կը զարդարեմք «Գեղունի»ն Խալիա բնակող Պ. Ս. Նահապետեան փորագրչի մեզ յրած գեղեցիկ քաղմագունի պատկերով», - գրուած է հանդէսի վերոնշեալ համարի առաջաբանում<sup>12</sup>: Հանդէսի շապիկին տեսնում ենք նաեւ S. Nahabed մականգրութիւնը: Սիմոն Նահապետեանը, նոյն ինքը՝ Սիմոն Նահապետը, Խալիայում ստեղծագործած լուսանկարիչ, գծանկարիչ եւ փորագրութեան վարպետ է, ում գրաֆիկական ձեւաւորումները, փորագրապատկերները եւ լուսանկարները տեղ են գտել են «Գեղունի» հայաթերթում<sup>13</sup>: Նշենք, որ Ս. Նահապետը 1900ականներին վեներտիկում ստեղծել է նաեւ «Հայրունի դեմքեր» վերտառութեամբ գեղարուեստական բացիկ, որտեղ նա մի սեղանի շուրջ հաւաքել է մեր մշակոյթի եւ եկեղեցու երեւելիներին՝ Հ. Ղեւոնդ Ալիշանին, Խրիմեան Հայրիկին, Բաֆֆուն, Միքայէլ Նալբանդեանին, Մկրտիչ Պէշիկթաշլեանին, Գրիգոր Արծրունուն, Ռափայէլ Պատկանեանին, Ստեփան Նազարեանցին եւ Խաչատուր Աբովեանին, որոնք իրականում երբեւէ միասին սեղան չեն նստել: Պատկերն ունի ակնյայտօրէն խորհրդանշական բնոյթ: Այն յիշեցնում է Խորհրդաւոր ընթրիքի աւանդական պատկերագրութիւնը, ընդ որում սուրբ եւ հանդիսաւոր սեղանին դրուած են ազգանուէր գործին ծառայող ուսումնասիրութիւնները, գրուածքները եւ փետուր գրիչները: Ուշագրաւ է, որ ականաւոր հայ գործիչների, նուիրեալների աստղաբոյլի մէջ յորինուածքային լուծումով՝ իր

10 ԱՐԾՐՈՒՆԻ Գ., *Վեներտիա 1970 թուին*, ի Ալիշանը ժամանակակիցների յուշերում, է21-29:

11 Տե՛ս «Գեղունի», Վեներտիկ 1903, թիւ 1-10, 16-37:

12 Անդ, 5:

13 ԱՂԱՍԵԱՆ Ա., *Հայ կերպարուեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում*, 255:

չեշտուած կենտրոնական դիրքով առանձնանում է Ալիշանը: 1903ի «Գեղունու» նոյն Ալիշանն է, ուղղակի այստեղ իր կերպարի սրբազնականութիւնն ասես աւելի է շեշտադրուած, քանի որ մեծ հայորդու ծանրակշիռ կերպարը զետեղուել է խորքի վերնամասի կամարի մէջ՝ սրբերի պատկերագրութեանը բնորոշ կերպով: 1903ի պատկերների հետ նոյնական են նաեւ Բաֆֆու, Ռ. Պատկանեանի եւ Ս. Նազարեանցի դիմանկարները:

Արուեստաբան Արարատ Աղասեանի «Հայ կերպարուեստի ցարգացման ուղիները XIX-XX դարերում» հիմնական աշխատութեան շնորհիւ տեղեկանում ենք նկարչական, դերասանական եւ երաժշտական մեծ շնորհով օժտուած, Կ. Պոլսի Գեղարուեստի վարժարանի շրջանաւարտ Ստեփան Ակայեանի՝ Չ. Ղ. Ալիշանին պատկերող ջրաներկ աշխատանքի մասին, որն առայժմ չենք զբտել<sup>14</sup>:

Իր ճգնաւոր կեանքով, աշխատասիրութեամբ, մեծ արժէք ներկայացնող գիտական գործերով, հիասքանչ բանաստեղծութիւններով եւ հայրենաշունչ երկերով հայ ազգի հանճարը կերպաւորող Ալիշանի կերպարը յաւերժացրել են նաեւ քանդակում հայ եւ օտարազգի քանդակագործներ Անդրէաս Տէր-Մարուքեանը, Տիգրան Արզումանեանը եւ Կառլոյ Լորենցետտին: Լուսաստուերային խաղով, շարժուն եւ կայուն զանդուածների հակադրութեամբ եւ ընդհանուր մեծդիտութեամբ է աչքի ընկնում Մոսկուայում, Պետերբուրգում եւ Փարիզում գեղարուեստական կրթութիւն ստացած, փարիզաբնակ շնորհալի քանդակագործ Ա. Տէր-Մարուքեանի՝ 1903ին լուսանկարից կերտած կիսանդրին, որ նոյն թուականին ձուլուել է բրոնզից Մոսկուայում՝ Վիշնեսկի եղբայրների ձուլարանում, իսկ 1941ին փոխադրուել է Հայաստանի պետական պատկերասրահ<sup>15</sup>: «Ալիշանի լայն բացած աչքերի եւ սւեւ-ռուն հայեացքի, եւ ընդհանրապէս աշխոյժ դէմքի ամբողջ արտայայտութեան մէջ ընդգծուած է անձնաւորութեան առաւել բնորոշ կողմը՝ իմաստուն եւ բազմալատակ գիտնականը», - քանդակագործին նուիրուած իր մենագրութեան մէջ նշում է արուեստաբան Մինաս Սարգսեանը<sup>16</sup>:

14 Ստեփան Ակայեանը նկարագարդել է Թեոդիկի եւ Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոցի հրատարակած տարեցոյցերը, հեղինակել է հայ ակաճաւոր դէմքերի՝ Մեսրոպ Մաշտոցի, Մկրտիչ Նրիմեանի եւ այլոց ջրաներկ գունաւոր մանրապատկերներ: Տե՛ս նոյն տեղում, 253:

15 Տե՛ս ՄԱՐԳԱՐԻՏԱ Մ., *Անդրէաս Տէր-Մարուքեան*, Երևան 1960, 108:

16 Անդ, 36:

Պլաստիկական ընդհանրացուած ձեւերով, դիրքով եւ ընդհանուր հնչեղութեամբ այս քանդակին մօտ է ՀՀ վաստակաւոր նկարիչ, քանդակագործ Տ. Արզումանեանի կերտած բրոնզաձուլ կիսանդրին, որ 2004ին ԱՄՆում բնակուող բարերար Քնարիկ եւ Գրիգոր Թաթարեանների ջանքերով տեղադրուել է համար 95 միջնակարգ դպրոցի բակում: 1971ին, Հ. Ղեւոնդ Ալիշանի ծնընդեան 150ամեակի առթիւ, դպրոցն անուանակոչուել է մեծ գիտնականի անունով:

Վենետիկի Գեղարուեստի ակադեմիայի շրջանաւարտ, իտալացի արձանագործ Կ. Լորենցետտի Ալիշանը հոգեւորականի ճշգնասուն կերպար է, որ շեշտադրում է նաեւ զգեստի ծալքերի անհանգիստ յաջորդական ուղղահայեաց բնոյթով եւ աննիւթականութեամբ: Բրոնզէ կիսանդրին Միաբանութեանն է նուիրաբերել Կարապետ Մաթոսեանը 1908 թուականին:

Անշուշտ քիչ չեն Հայր Ղեւոնդ Ալիշանին նուիրուած արուեստի գործերը, որոնք թէեւ տարբեր են կատարման վարպետութեան եւ ներշնչանքի առումով, բայց բոլոր դէպքերում հետաքրքրական են ինչպէս հետազօտողի, այնպէս էլ ոչ մասնագէտի համար, քանի որ ներկայացնում են մեծանուն, նուիրեալ եւ սիրելի հայորդուն: Միեւնոյն ժամանակ յոյս յայտնենք, որ մօտ ապագայում կը ստեղծուեն բազմավաստակ հայորդու սրբազնական եւ մարդկային էութեան տարբեր կողմերը բացայայտող, նորանոր ելեւէջներով յազեցած նոր ստեղծագործութիւններ:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼԵԱՆ

### Summary

## Fr. GHEVOND ALISHAN'S IMAGE IN FINE ARTS

MARGARITA KAMALYAN

The image of Fr. Ghevond Alishan (1820-1901) was immortalized in Fine arts by Armenian and foreign artists. Arshag Fetvadjan and Noè Bordignon portray the Father as an intellectual. The works by Yeprem Savayan and Andreas Ter-Marukyan are full of dramatism and seem to express Alishan's inner state. Bronze bust created by Tigran Arzumanyan is highly generalized and stands for it monumental sounding, whereas the one made by Carlo Lorenzetti dwells more on the spirituality of Alishan. Father Alishan's image has also been portrayed in art by Hovhannes Aivazovsky, Harutyun Shamshinyan, Simon Nahabed, Paul Asadour and Stepan Akayan.

Although painterly and graphic portraits and busts of Alishan vary in the degree of mastery, inspiration and artistic interpretation of the images of the great scientist-Armenologist, poet, pedagogue and monk, but they definitely are of interest and great value.